

Մ. Նալբանդյանի անվան «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի Արհեստակցական կազմակերպության 2020 թվականի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զեկուցող՝ ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության նախագահ Պրոֆեսոր՝ Վալերի
Խաչատրյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը համալսարանի կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու համար:

Արհեստակցական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային, սոցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,
3. Համալսարանի ղեկավարության առջև հանդես գալ ներբուհական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ՇՊՀ-ի աշխատակիցների սոցիալական վիճակն ու պայմանները:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ արհկոմի աշխատանքները կրել են սոցիալական բնույթ:

Հաշվետու ժամանակահատվածում արհկոմը կազմակերպել և անցկացրել է տարբեր տեսակի ու բնույթի միջոցառումներ՝ նվիրված «Մեծ Հաղթանակ»-ին, «Եղեռն»-ին, «Դեկտեմբերի 7»-ին, «Մայրության և գեղեցկության»-ը, «Ամանոր»-ին: Միշտ ծաղկեպսակներով այցելել ենք «Մեծ Հաղթանակ»-ին, «Շուշիի ազատագրման»-ը, «Եղեռն»-ի զոհերին, «Դեկտեմբերի 7»-ին նվիրված հուշարձաններին:

Այս տարին նատկապես աչքի ընկավ սոցիալական շատ խիստ, ընդգծված վայրիվերումներով: Ամբողջ երկրում կյանքը կարծես կանգ առավ պայմանավորված կորոնավիրուսի համաճարակով: Ծանրացավ աշխատակիցների սոցիալական վիճակը:

Արհկոմը, որի շարքերը քաղաքական դրդապատճառներով նոսրացել են և ֆինանսական մուտքերը շատ նկատելի պակասել (450 անդամից մնացել է 153 անդամ) իր սուղ ֆինանսական միջոցներից 40 աշխատողների հատկացրել են նյութական օգնություն սննդամթերքի տեսքով (1 անդամին 7500 դրամ):

Այդ ամբողջ ընթացքում արհկոմը օգնում է իր սոցիալապես անապահով աշխատակիցներին նաև ֆինանսապես: Ապրիլի 24-ի Եղեռնի տարելիցի օրը արհկոմը «Ջարդի ձոր» վայրում անմեղ զոհերի հիշատակի հուշարձանին ծաղկեպսակ դրեց: Մայիսի 9-ին «Մեծ Հայրենականի և Շուշիի» ազատագրման տարելիցի կապակցությամբ ծաղկեպսակ դրվեց «Մայր Հայաստան» հուշահամալիրում:

Սեպտեմբերին սկսվեց երկրակործան պատերազմը:

Արհկոմը մի բռունցք դարձած օգնում և աջակցում էր մեր բանակին, ինչպես նաև Արցախից տեղահանված մեր հայրենակիցներին հագուստի և սննդի տեսքով, և աջակցում նաև ֆինանսապես:

Համալսարանի հյուրատանը հյուրընկալվեցին պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված 10 ընտանիք (կանայք, երեխաներ, ծերեր): Արհկոմը իր ֆինանսական միջոցներից օգնեց մեր հայրենակիցներին: Արհկոմի անդամների հաճախակի այցելում էին հյուրատուն, զրուցում, հետաքրքրվում նրանց առօրյայով, փորձում օգտակար լինել նրանց: Պատերազմի խայտառակ պարտությունից հետո երբ ստորագրվեց կապիտուլացիան արհկոմը չնդունեց պարտություն և ամեն միջոցով փորձում է պայքարել դավաճան քաղաքական իշխանության հեռացման գործընթացին:

Այս ամբողջ ընթացքում արհկոմը իր սուղ ֆինանսական միջոցներից օգնում և աջակցում է առողջական, սոցիալական խնդիրներ ունեցող իր աշխատակիցներին: Պատերազմին մասնակցած մեր աշխատակիցներին արհկոմը աջակցեց նաև ֆինանսապես (100000 դրամ): Ամանորյա տոների կապակցությամբ արհկոմը իր ֆինանսական միջոցներից աշխատակիցների բաժանեց փոքրիկ նվերներ:

Ըստ արհեստակցական կազմակերպության կանոնադրության որպես աշխատավարձ հատկացվում է հավաքագրված գումարի 40%-ը: Արհեստակցական կազմակերպության նախագահը (Վ. Խաչատրյան) հրաժարվել է իր հաստիքային աշխատավարձից և աշխատում է հասարակական հիմունքներով ամբողջ ֆինանսը օգտագործելով աշխատակիցների սոցիալական ծանր վիճակը մեղմելու նպատակով:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական ծախսերի և գործունեության հաշվետվությունները տեղակայած են համալսարանի կայքում և հասանելի են բոլորին:

Արհեստակցական կազմակերպության գործունեությունը եղել է թափանցիկ և հասանելի բոլորին:

ՇՊՀ-ի Արհեստակցական կազմակերպությունը գործել և գործում է «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ Արհեստակցական կազմակերպությունների մասին օրենքի» և « ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության» և «ՇՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում:

Արհեստակցական կազմակերպությունը ունի անն շատ չարված գործեր, աշխատանքներ ու թերացումներ .

1. Չկարողացանք հասնել այն բանին, որ մեր աշխատակիցները ունենան առողջական ապահովագրություն,
2. Անհրաժեշտ էր կարգավորել ծննդօգնության խրախուսաման գաղափարը՝ դարձնելով այն պարտադիր,
3. Չկարողացանք հստակեցնել իրական սոցիալական անապահովների ցուցակը,
4. Չկազմակերպվեցին ուղևորություններ դեպի պատմամշակութային հուշարձաններ,
5. Չկարողացանք համալսարանում հաստատել հանդուրժողականության, հարգանքի և սիրո մթնոլորտ: